«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
ֆ.գ.դ., պրոֆեսոր
_____ Գ. Ս. Ավետիսյան
«10» օգոստոսի 2020թ.

ԿԱՐԾԻՔ

Անուշ Լավրենտի Թումանյանի «Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի տնտեսամաթեմատիկական ցուցանիշների գնահատումը (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2020 թվականի օգոստոսի 10-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 09-20):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ներսեսյան Կարեն Վասիլիի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ոսկանյան Մարիամ Համբարձումի**՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Չախոյան Էլիզա Միքայելի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Սահակյան Դավիթ Ալբերտի**՝ ֆ.-մ. գիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության և բիզնեսի մեջ մաթեմատիկական մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչ, **Իսկանդարյան Դավիթ Սամվելի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Թամազյան Արմեն Լիպարիտի**՝ ավագ դասախոս, **Պետրոսյան Արմեն Շահենի**՝ ավագ դասախոս, **Պետրոսյան Իրինա Բորիսի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, **Ավետիսյան Անի Գրիգորի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի**, տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի**՝ ավագ դասախոս, **Հակոբյան Էսթեր Աշոտի**՝ ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի**՝ ավագ

դասախոս, **Ավետիսյան Լարիսա Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Աղաջանյան Արմինե Վլադիմիրի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի**՝ դասախոս, **Նաշիկյան Լիլիա Աշոտի**՝ ասիստենտ, **Սարգսյան Լիլիթ Կարենի**՝ ասիստենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգում ԽՍՀՄ փլուզումից ի վեր տեղի են ունեցել և ունենում են մի շարք բարեփոխումներ, որոնք սակայն չեն կարողանում լուծել այն հիմնախնդիրները, որոնք առկա են համակարգում: Այդ բարեփոխումների արդյունքները չեն բավարարում առողջապահական համակարգի գործունեության հիմնական նպատակներին՝ բնակչության հիվանդացության մակարդակի իջեցմանը, բուժօգնության մատչելիության բարձրացմանը, թափանցիկության ապահովմանը, պետական բուժհիմնարկների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ օրակարգային հարց է համարվում պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրումը, որի ուղղությամբ էլ վերջին տարիներին կայացվել են բազմաթիվ քննարկումներ, մշակվել են տարբեր փաստաթղթեր, սակայն այդպես էլ դրանք բոլորը մնացել են թղթի վրա: Պարտադիր բժշկական ապահովագրության հիմնահարցը հանդիսանում է առողջապահության համակարգի զարգացման և բարեփոխումների կարևորագույն նախապայմաններից մեկը, ընդ որում այն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես առողջապահության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ ներգրավելու միջոց, այլ նաև բնակչության համար բժշկական օգնությունը առավել մատչելի դարձնելու, սոցիալական արդարության սկզբունքներ սահմանելու և բժշկական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու երաշխիք և համապետական նշանակության կարևորագույն նպատակ: Այս առումով ապահովագրության ներդրումը սերտորեն կապված է ինչպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր միտումների, այնպես էլ առողջապահության համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքի հետ:

Վերոհիշյալ հիմնահարցերի քննարկմանն ու որոշակի առաջարկությունների մշակմանն է նվիրված «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Անուշ Թումանյանի ատենախոսությունը: Ներկայացված հիմնախնդիրներով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ-ում արդյունավետ պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման ցուցանիշների առաջադրումն ու գնահատումն է մաթեմատիկական մոդելների և մեթոդների միջոցով, որոնք իրականացնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Բացահայտել բժշկական ապահովագրության էությունը, դրա սոցիալ-տնտեսական առնչությունները և տալ ընդհանրական սահմանում,
- Ուսումնասիրել պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի միջազգային փորձն ու դրա ներդրման անհրաժեշտությունը ՀՀ-ում,
- Ուսումնասիրել ՀՀ առողջապահական համակարգը, բացահայտել դրանում առկա հիմնախնդիրները,
- Ուսումնասիրել ՀՀ առողջության ապահովագրության ոլորտը, զարգացման հիմնական ցուցանիշները,
- Հիմնավորել պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրումը,
- Գործոնային վերլուծության միջոցով գնահատել ՀՀ առողջապահական համակարգի արդյունավետությունը,
- Կլաստերային վերլուծության միջոցով տեղորոշել ՀՀ առողջապահական համակարգի դիրքը հետխորհրդային երկրների շարքում,
- Ակտուարական հաշվարկների միջոցով գնահատել ՀՀ-ում ներդրվող բժշկական ապահովագրական համակարգի սակագինը,
- Կանխատեսել ՀՀ-ում ներդրվող պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ապահովագրավճարը Մոնտե-Կառլոյի մեթոդով:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացված վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող արդյունքներ, որոնցից ըստ հեղինակի գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Վերլուծելով ՀՀ առողջության գծով համախառն ապահովագրավճարներն ու հատուցումները՝ գնահատել պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման արդյունավետությունը:
- Գործոնային վերլուծության միջոցով գնահատվել է առողջապահական համակարգի արդյունավետությունը:

- Կլաստերային վերլուծության միջոցով տեղորոշվել է ՀՀ առողջապահական համակարգի դիրքը հետխորհրդային երկրների շարքում:
- Մոնտե-Կառլոյի մեթոդով գնահատվել է ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրավճարի չափը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հետազոտության արդյունքներն ու եզրահանգումները կարող են կիրառվել ՀՀ առողջապահական, ապահովագրական ոլորտներում, պարտադիր բժշկական ապահովագրության ներդրմանը առնչվող գերատեսչություններում, նախարարություններում: Դրանք կարող են տեղեկատվական նյութ հանդիսանալ տնտեսագետ-հետազոտողների համար, ովքեր զբաղվում են տվյալ հիմնախնդրի ուսումնասիրություններով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և 10 հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 173 էջի վրա, պարունակում է 54 աղյուսակ, 28 գծապատկեր և 10 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***«Ներածություն»*** բաժնում հիմնավորվել է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության գիտական նորույթը, արդյունքների կիրառական նշանակությունը, ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«ՀՀ-ում բժշկական ապահովագրական համակարգի խնդիրներն ու զարգացման հեռանկարները»*** գլխում, հեղինակը ուսումնասիրել է բժշկական ապահովագրական համակարգի սոցիալ-տնտեսական առնչությունները՝ ուսումնասիրելով տարբեր տնտեսագետների աշխատությունները՝ համապարփակ կերպով ներկայացրել է բժշկական ապահովագրության հիմնական հասկացություններն ու բաղկացուցիչները, տվել ընդհանրական սահմանում: Մանրամասն կերպով վերլուծել է պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի միջազգային փորձը, ներդրման առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Առանձին կերպով վերլուծվել են ՀՀ առողջության ապահովագրության համակարգի զարգացման հիմնական ցուցանիշներն ու

գնահատվել պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման արդյունավետությունը:

Ատենախոսության երկրորդ՝ ***«ՀՀ առողջապահական համակարգում պարտադիր բժշկական ապահովագրության ֆինանսատնտեսական գնահատականը և ներդրման արդյունավետության գործոնային և կլաստերային վերլուծությունները»*** գլխում հեղինակը ներկայացրել է ՀՀ առողջապահական համակարգի գործունեության հիմնական ցուցանիշները, համակարգում առկա հիմնախնդիրները, վերլուծել է առողջապահական համակարգի ֆինանսավորման աղբյուրներն ու փորձել գնահատել առողջության ապահովագրության տեղը ֆինանսավորման աղբյուրների շարքում: Կատարվել է աշխարհում հայտնի առողջության ապահովագրության ֆինանսավորման մոդելների համեմատական վերլուծություն և քննարկվել դրանց ներդրման հնարավորությունները ՀՀ-ում: Առանձին կերպով ուսումնասիրվել են բժշկական ապահովագրության զարգացման հիմնական ցուցանիշների և սոցիալ-տնտեսական ցուցանիշների փոխկապվածությունները: Հեղինակը այս գլխում գնահատել է ՀՀ առողջապահական համակարգի արդյունավետությունը և տեղորոշել ՀՀ առողջապահական համակարգի դիրքը հետխորհրդային երկրների շարքում՝ կիրառելով գործոնային և կլաստերային վերլուծություններ:

Ատենախոսության երրորդ՝ ***«ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի ներդրման տնտեսամաթեմատիկական գնահատման լուծումները»*** գլխում հեղինակը նախորդ երկրու գլուխներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում փորձել է տնտեսամաթեմատիկական մոդելների, մեթոդների և ակտուարական հաշվարկների միջոցով գնահատել ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագական համակարգի ներդրման հիմնական ցուցանիշները: Նախ ակտուարական հաշվարկների միջոցով հաշվարկվել է պարտադիր բժշկական ապահովագրական համակարգի սակագինը, այնուհետև Մոնտե-Կառլո սիմուլյացիաների օգնությամբ կանխատեսվել է պարտադիր բժշկական ապահովագրավճարի չափը, ընդ որում սցենարային փոփոխականների կանխատեսումը իրականացվել է վեկտորային ավտոռեգրեսիոն մոդելի միջոցով:

«Եզրակացություններ» բաժնում հեղինակը ներկայացրել է ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1. Ատենախոսության առաջին գլուխը մեծամասամբ դասագրքային բնույթ է կրում /ինչը երևում է հղումներից/, ավելին, հեղինակի կողմից վերլուծված

աշխատությունների մեծամասնությունը հայրենական և ռուսաստանյան հեղինակների ուսումնամեթոդական ձեռնարկներ են, այն ինչ արդի մասնագիտական գրականության մեջ առկա են բազմաթիվ արտասահմանյան հետազոտություններ պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման վերաբերյալ:

2. Ատենախոսության կառուցվածքի տրամաբանությունը վիճելի է, քանզի տեսական բնույթ ունեցող նյութերը և միջազգային փորձին վերաբերվող վերլուծությունները հանդիպում են աշխատանքի տարբեր մասերում, մասնավորապես, բացառապես ՀՀ-ին վերաբերվող ենթակետերում:
3. Ցանկացած ատենախոսական հետազոտություն ենթադրում է առաջարկությունների մշակում՝ հիմնված հետազոտության եզրակացությունների վրա: Սակայն ներկայացվող աշխատանքն ավարտվում է միայն եզրակացություններով:
4. Գրականության ցանկում և հղումներում տեղ գտած էլեկտրոնային ռեսուրսները թվարկելիս հեղինակը չի նշում կայքերի հստակ անվանումները, այլ նշում է միայն դրանց հղումները: Նշենք նաև, որ գրականության ցանկում տեղ են գտել բազմաթիվ աղբյուրներ, որոնք արտացոլված չեն հղումներում՝ ատենախոսության տեքստի մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները ընդհանուր առմամբ չեն նվազեցնում հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Անուշ Լավրենտի Թումանյանի «Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի տնտեսամաթեմատիկական ցուցանիշների գնահատումը (ՀՀ նյութերով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Անուշ Լավրենտի Թումանյանի «Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի տնտեսամաթեմատիկական ցուցանիշների գնահատումը (ՀՀ նյութերով)»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է

տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Է. Մ. Սանդոյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝ Մ. Հ. Ոսկանյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ Ի. Բ. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության և բիզնեսի մեջ մաթեմատիկական
մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների»
ամբիոնի դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Դ.Ա. Սահակյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի
ավագ դասախոս՝ Ա.Շ. Պետրոսյան

PETROSYAN
ARMEN
2114730190
2020.08.15
11:45:36 +04'00'

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ Ռ. Ս. Կասաբաբովա